Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
«_31_ »__08__ 2020 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):
Ամբիոնի պետ, ոստ. փոխգնդապետ
Ա. Հովհաննիսյան ……
(ստորագրություն)
……
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Իրավապահ մարմինները ՀՀ-ում – 1 (առկա վճարովի ուսուցում)
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական դատավարության ամբիոն E-mail: qrdatambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Հովհաննիսյան (ի. գ. թ., դոցենտ) E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**4 (չորս)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Իրավապահ մարմինները ՀՀ-ում – 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 120 ժամ, որից 36-ը՝ դասախոսություն, 28-ը՝ սեմինար, 56-ը՝ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է ընթացիկ երկու քննությունների և եզրափակիչ քննության անցկացմամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «ՀՀ սահմանադրական իրավունք» դասընթացների իմացության վրա:

ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ իրավապահ մարմինները– 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են իրավապահ գործունեության էությունը, նշանակությունը, իրավապահ գործունեության հիմնական ձևերը, ՀՀ դատական համակարգի և իրավապահ կոնկրետ մարմինների գործունեության առանձնահատկությունները:
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ իրավապահ գործունեության ձևերի, իրավապահ մարմինների կարգավիճակի, գործառույթների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1. սահմանել իրավապահ գործունեության հիմնական հասկացությունները, ուղղությունները, 2. սահմանել արդարադատության սկզբունքների էությունը և բովանդակությունը, 3. ներկայացնել ՀՀ դատարանների գործունեությունը և լիազորությունները, 4. ներկայացնել պետական մարմինների համակարգում ՀՀ դատախազության տեղի և դերի, դատախազության մարմինների համակարգի և կառուցվածքի, դատախազության լիազորությունների (գործառույթների), 5. սահմանել ոստիկանության հասկացությունը, խնդիրները, կառուցվածքը և գործառույթները, ոստիկանության գործունեության հիմնական ուղղությունները, 6. սահմանել ազգային անվտանգության հասկացությունը, ներկայացնել ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնական ուղղությունները, 7. սահմանել նախնական քննության հասկացությունը և բովանդակությունը: 8. ներկայացնել նոտարական և փաստաբանական գործունեության խնդիրները և սկզբունքները, նոտարական և փաստաբանական գործունեության ուղղությունները, նոտարի և փաստաբանի իրավական վիճակը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Կարողանա՝***		1) վերլուծել իրավապահ գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակի տարրերը, 2) գնահատել արդարադատության սկզբունքների նշանակությունը իրավապահ գործունեության համար, 3) թվարկել և բացատրել ՀՀ դատական համակարգը կազմող դատարանների լիազորությունները, դատավորի անկախության երաշխիքները, 4) մեկնաբանել հանրային իշխանության համակարգում

		իրավապահ կոնկրետ մարմինների տեղը և դերը, վերարտադրել այդ մարմինների համակարգը և կառուցվածքը, թվարկել և բացատրել նրանց լիազորություն-ները, 5) սահմանել նախնական քննության (հետաքննության և նախաքննության) հասկացությունը, գնահատել նշանակությունը, բացատրել հետաքննության և նախաքննության բովանդակությունը, 6) սահմանել, թվարկել ու բացատրել փաստաբանության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները, փաստաբանության կազմակերպման և գործունեության սկզբունքները, ձևակերպել փաստաբանների պալատի կազմավորման ու գործունեության կարգը, վերարտադրել հանրային պաշտպանի գրասենյակի կազմավորման ու գործունեության առանձնահատկությունները: 7) սահմանել նոտարիատի հասկացությունը և նշանակությունը, թվարկել ու բացատրել նոտարի իրավունքներն ու պարտականությունները, նոտարի պատասխանատվության հիմքերն ու կարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. *Դիլբանդյան Ս., Հարությունյան Ա., Ղազինյան Գ., Ղուկասյան Հ.* Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները / Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ.Ս. Ղազինյան: Երևան, 6-րդ հրատ., Տիգրան Մեծ., 2014: 2. Правоохранительные органы: учебник для вузов / под ред. О. А. Галустьяна. – М.: Юнити-Дана, 2008. 3. Правоохранительные органы: учебник / под ред. В. П. Божьева. – М.: Высшее образование, 2007. 4. *Гуценко, К. Ф.* Правоохранительные органы: учебник для вузов / К. Ф. Гуценко, М. А. Ковалев. – М.: Зерцало, 2007.
Լրացուցիչ		1. *Байдуков, В. А.* Правоохранительные органы Российской Федерации: учебник для вузов / В. А. Байдуков, В. М. Бозров, Е. Р. Ергашев [и др.]. – М.: Норма, 2008. 2. Савюк, Л. К. Правоохранительные органы: учебник / Л. К. Савюк. – М.: Юристъ, 2006. 3. Гриненко А.В., Жариков Ю.С. Правоохранительные органы Российской Федерации: Краткий учебный курс. – М.: Норма, 2005. 4. Дмитриев Ю.А., Шапкин М.А. Правоохранительные органы РФ. – М.: Эксмо, 2005. 5. Качалов В. Правоохранительные органы: Курс лекций. — М.2005. 6. Правоохранительные органы: Конспект лекций. — М.: Приор-2004. 7. Рыжаков А.Л. Правоохранительные органы: Учебник;

		М.:ИНФРА-М,2004. 8. Савюк Л. К. Правоохранительные органы: Учебник. — М.: Юристъ, 2004. 9. Смирнова Н.Н. Правоохранительные органы Российской Федерации Учебное пособие. – М.: Изд-во Михайлова В.А., 2004. 10. Фокин В.М. Правоохранительные органы: Учебник для вузов., 2005. 11. Черников В.В. Судоустройство и правоохранительные органы РФ. – М.: Проспект, 2005. 12. Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу РФ / Под общ. ред. В.М. Лебедева. М., 2002. 13. Беленков Р.А. Правоохранительные органы: Конспект лек М.: Приориздат, 2003. 14. Габричидзе Б. И., Елисеев Б. П., Чернявский А. Г. Правоохранительные органы Российской Федерации. – М.: Дело и Сервис (ДИС), 2002. 15. Григонис Э.П. Правоохранительные органы: Учебник для СПбу: Питер Бук, 2002. 16. Гуценко К. Ф., Ковалев М. А. Правоохранительные органы Ф. Гуценко. — М.: Зерцало, 2000. 17. Кобзарев Ф. М., Кобзарева В. Ф. Правоохранительные органы. М.:МПСИ, 2002. 18. Лиманский В.А. Правоохранительные органы. Сборник схем: Учебное пособие для вузов. – СПб: Паритет, 2003. 19. Орлов Ю.К., Кручинина Н.В. Суд и правоохранительные органы. – М.: Юристъ, 2003. 20. Правоохранительные органы Российской Федерации: Учебник/ под ред. В. П. Божьева. – М.: Спарк, 2002. 21. Смоленский М. Б., Фисенко Л. А. Правоохранительные органы РФ. Ростов н/Д.: Феникс, 2002. 22. Черников В.В. Судебные, правоохранительные и контрольные органы России: Учебник. – М.: Велби, 2002. 23. Четвериков В. С. Правоохранительные органы: Учебное пособие. М.:Инфра-М, 2001.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով		
18-20	Գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր	
13-17	Լավ	Հարց 1	Հարց 2
8-12	Բավարար	2 միավոր	2 միավոր
0-7	Անբավարար		
0	Չներկայացած		

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (գերազանց) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և

		դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Ներկայություն		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Իրավապահ գործունեությունը և ՀՀ իրավապահ մարմինները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավապահ գործունեությանը և իրավապահ մարմինների հասկացությունը. **2.** Իրավապահ գործունեության ձևերը.	Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 2 Դատական իշխանությունը **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական իշխանությունը իշխանությունների տարանջատման համակարգում: **2.** Դատական իշխանության հասկացությունը: Դատարանը որպես դատական իշխանության մարմին: **3.** Արդարադատության հասկացությունը: Դատական իշխանության, արդարադատության և դատավարության հարաբերակցությունը:	1. Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: 2. Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: 3. Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 3 Արդարադատության սկզբունքները **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Արդարադատության սկզբունքների հասկացությունը և համակարգը. **2.** Արդարադատության սկզբունքների բովանդակությունը.	Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 4 ՀՀ դատական համակարգը: Դատավորի կարգավիճակը ՀՀ-ում **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ դատական համակարգը. **2.** Դատավորի կարգավիճակը և նրա անկախության երաշխիքները. **3.** Դատական համակարգի կազմավորումը: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակը և լիազորությունները.	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարց 3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 5 ՀՀ սահմանադրական դատարանը **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում: ՀՀ սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության սկզբունքները **2.** ՀՀ սահմանադրական դատարանի կազմը, անդամների կարգավիճակը և գործունեության կազմակերպումը. **3.** ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունները	Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 6 ՀՀ դատախազությունը **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում: Դատախազության մարմինների համակարգը և կառուցվածքը. **2.** Դատախազության գործունեության ուղղությունների (գործառույթների) ընդհանուր բնութագիրը.	1. Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: 2. Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: 3. Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 7 ՀՀ ոստիկանությունը **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ոստիկանության հասկացությունը, կառուցվածքը, գործառույթները և խնդիրները. **2.** Ոստիկանության գործունեության հիմնական ուղղությունները.	**1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: **3.** Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 8 ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ազգային անվտանգության ընդհանուր բնութագիրը: Ազգային անվտանգության մարմինների համակարգը. **2.** Ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնական ուղղությունները.	**1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: **3.** Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 9 Նախնական քննության մարմինները **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նախնական քննության հասկացությունը, նշանակությունը և բովանդակությունը. 2. Հետաքննության և նախաքննության մարմինները.	**1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: **2.** Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: **3.** Հարցեր 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 10 ՀՀ նոտարիատը **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նոտարիատի հասկացությունը և նշանակությունը. 2. ՀՀ-ում նոտարի կարգավիճակը: Նրա իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը. 3. Նոտարական պալատը.	1. Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: 2. Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: 3. Հարցեր 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 11 Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Փաստաբանության և փաստաբանական գործունեության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները. 2. Փաստաբանության կազմակերպման և գործունեության սկզբունքները. 3. Փաստաբանների պալատը. 4. Փաստաբանական գործունեության ուղղու-թյունները և արտոնագրումը. 5. Փաստաբանի իրավական վիճակը. 6. Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը.	1. Հարցեր 1-6՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: 2. Հարցեր 1-6՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: 3. Հարցեր 1-6՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Իրավապահ մարմինները ՀՀ-ում – 1» առարկայի
միջանկյալ 1-ին քննության

1. Իրավապահ գործունեության հասկացությունը, հատկանիշները և ձևերը: Իրավապահ մարմինների հասկացությունը և տեսակները.
2. Դատական իշխանության հասկացությունը և հատկանիշները: Դատական ատյանները և օղակները: Դատական կազմը որպես դատարանի հատկանիշ.
3. Արդարադատության հասկացությունը և հատկանիշները.
4. Արդարադատության մատչելիությունը. Օրենքի և դատարանի առջև հավասարությունը. Օրինականությունը. Դատարանների անկախությունը. Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի ապահովումը. որպես արդարադատության սկզբունքներ.
5. Ողջամիտ ժամկետում գործի քննությունը և լուծումը. Դատավարության լեզուն. Կողմերի դատավարական իրավահավասարությունը և մրցակցությունը. Իրավաբանական օգնության ապահովումը որպես արդարադատության սկզբունքներ.
6. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և վարչական դատարանները.
7. Վերաքննիչ դատարանները և ՀՀ վճռաբեկ դատարանը.
8. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը.
9. Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը: Դատավորի անկախության երաշխիքները: Դատավորի պաշտոնում նշանակման արգելքները.
10. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգը և կազմը: Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները.
11. Սահմանադրական դատարանի կազմը և ձևավորման կարգը: Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնին ներկայացվող պահանջները.
12. Սահմանադրական դատարանի անդամի կարգավիճակը, նրա անկախության երաշխիքները.
13. Սահմանադրական արդարադատության սկզբունքները.
14. Սահմանադրական դատարանի լիազորությունները: Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարեցման հիմքերը.
15. Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտները.
16. Սահմանադրական վերահսկողության տեսակները.

ՀԱՐՑԱՇԱՐ

«Իրավապահ մարմինները ՀՀ-ում – 1» առարկայի
միջանկյալ 2-րդ քննության

1. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում.
2. Դատախազության մարմինների համակարգը և կառուցվածքը.
3. Քրեական հետապնդման հարուցումը, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).
4. Դատախազական հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ
5. Դատախազական հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ.
6. Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).
7. Պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դատարան, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).
8. Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).
9. Ոստիկանության հասկացությունը, խնդիրները, կառուցվածքը և գործառույթները.
10. Ոստիկանության գործունեության հիմնական ուղղությունները.
11. Ազգային անվտանգության ընդհանուր բնութագիրը.
12. Ազգային անվտանգության մարմինների համակարգը.
13. Ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնական ուղղությունները.
14. Նախնական քննության հասկացությունը, նշանակությունը և բովանդակությունը.
15. Հետաքննությունը որպես նախնական քննության ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) մաս: Հետաքննության մարմինները.
16. Նախաքննությունը որպես նախնական քննության կատարման հիմնական ձև: Նախաքննության մարմինները.

ՀԱՐՑԱՇԱՐ

«Իրավապահ մարմինները ՀՀ-ում – 1» առարկայի
ամփոփիչ քննության

1. Իրավապահ գործունեության հասկացությունը, հատկանիշները և ձևերը:
2. Իրավապահ մարմինների հասկացությունը և տեսակները: Նոտարական և փաստաբանական մարմինների, մասնավոր խուզարկուական և պահնորդական ծառայությունների՝ իրավապահ մարմիններին վերաբերելու հարցը.
3. Դատական իշխանության հարաբերակցությունը պետական իշխանության մյուս ճյուղերի հետ.
4. Պետական իշխանության համակարգում դատական իշխանության սոցիալական կոչումը.
5. Դատական իշխանության՝ որպես դատարանի գործառույթի հասկացությունը և հատկանիշները.
6. Դատարանը որպես դատական համակարգի կառուցվածքային միավոր՝ ատյան և օղակ: Դատական կազմը որպես դատարանի հատկանիշ.
7. Արդարադատության հասկացությունը և հատկանիշները.
8. Դատավարության հասկացությունը: Դրա հարաբերակցությունը դատական իշխանության և արդարադատության հետ.
9. Արդարադատության սկզբունքների հասկացությունը և համակարգը.
10. Արդարադատության մատչելիությունը.
11. Օրենքի և դատարանի առջև հավասարությունը.
12. Օրինականությունը.
13. Դատարանների անկախությունը.
14. Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի ապահովումը.
15. Ողջամիտ ժամկետում գործի քննությունը և լուծումը.
16. Դատավարության լեզուն.
17. Կողմերի դատավարական իրավահավասարությունը և մրցակցությունը.
18. Իրավաբանական օգնության ապահովումը
19. ՀՀ դատական համակարգի ընդհանուր բնութագիրը: Սահմանափակ և լրիվ վերաքննություն
20. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները.
21. Առաջին ատյանի վարչական դատարանները.
22. Վերաքննիչ դատարանները, որպես երկրորդ ատյանի դատարաններ.
23. ՀՀ վճռաբեկ դատարանը.
24. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը.
25. Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը: Դատավորի անկախության երաշխիքների համակարգը.
26. Դատավորի անկախության երաշխիքների բնութագիրը.
27. ՀՀ բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգը և կազմը.
28. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները.

29. Դատավորի պաշտոնում նշանակման արգելքները.

30. ՀՀ սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում: Սահմանադրության նորմերի անմիջական գործողությունը.

31. Սահմանադրական դատարանի անկախությունը և գործի հանգամանքների ի պաշտոնե պարզումը որպես սահմանադրական արդարադատության սկզբունքներ.

32. Կողմերի իրավահավասարությունը ու մրցակցությունը որպես սահմանադրական արդարադատության սկզբունք.

33. Կոլեգիալությունը և հրապարակայնությունը որպես սահմանադրական արդարադատության սկզբունքներ.

34. Անընդհատությունը և գործերի քննության (դատավարության) լեզուն որպես սահմանադրական արդարադատության սկզբունքներ.

35. Սահմանադրական դատարանի կազմը և ձևավորման կարգը: Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնին ներկայացվող պահանջները.

36. Սահմանադրական դատարանի անդամի կարգավիճակը, նրա անկախության երաշխիքները.

37. Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունների դադարեցման հիմքերը.

38. Սահմանադրական դատարանի լիազորությունները.

39. Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտները: Սահմանադրական վերահսկողության տեսակները.

40. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում.

41. Դատախազության մարմինների համակարգը և կառուցվածքը.

42. Քրեական հետապնդման հարուցումը, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).

43. Դատախազական հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ

44. Դատախազական հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ.

45. Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում և պետական շահերի պաշտպանության հայցի հարուցումը դատարան, որպես դատախազության գործունեության ուղղություններ (գործառույթներ).

46. Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը, որպես դատախազության գործունեության ուղղություն (գործառույթ).

47. Ոստիկանության հասկացությունը, կառուցվածքը և խնդիրները.

48. Ոստիկանության գործառույթները և գործունեության հիմնական ուղղությունները.

49. Ազգային անվտանգության ընդհանուր բնութագիրը: Ազգային անվտանգության մարմինների համակարգը.

50. Ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնական ուղղությունների բնութագիրը.

51. Նախնական քննության հասկացությունը, նշանակությունը և բովանդակությունը.

52. Հետաքննությունը որպես նախնական քննության ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) մաս: Հետաքննության մարմինները.

53. Նախաքննությունը որպես նախնական քննության կատարման հիմնական ձև: Նախաքննության մարմինները.

54. Նոտարիատի հասկացությունը և նշանակությունը: Նոտարական հիմնական գործողությունները: Նոտարի կողմից մատուցվող հիմնական ծառայությունները.

55. Նոտարական գործունեության երաշխիքները և դրանց բնութագիրը.

56. ՀՀ-ում նոտարի կարգավիճակը: Նոտարի պաշտոնում նշանակելը: Նոտարական գործողությունների և նոտարի կողմից մատուցվող ծառայությունների վճարովիությունը.

57. Նոտարին պաշտոնից ազատելու կամ նրա լիազորությունների դադարեցման հիմքերը.

58. Նոտարի կարգապահական և գույքային պատասխանատվությունը.

59. Նոտարական պալատը.

60. Փաստաբանության և փաստաբանական գործունեության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները.

61. Փաստաբանության կազմակերպման և գործունեության սկզբունքները.

62. ՀՀ փաստաբանների պալատը: Փաստաբանների պալատի խնդիրները.

63. Փաստաբանների պալատի նախագահը և պալատի մարմինները.

64. Փաստաբանական գործունեության ուղղությունները և դրանց բնութագիրը.

65. Փաստաբանական գործունեության արտոնագրումը.

66. Փաստաբան դառնալու՝ օրենքով սահմանված արգելքները և փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման հիմքերը.

67. Փաստաբանի հասկացությունը և փաստաբանի իրավունքները.

68. Փաստաբանի պարտականությունները: Փաստաբանական գործունեության (իրավաբանական օգնության ցուցաբերման) սահմանափակումները.

69. Փաստաբանի, նրա ընտանիքի անդամների և նրանց գույքի պետական պաշտպանությունը: Փաստաբանական գաղտնիքի հասկացությունը: Փաստաբանական գաղտնիքի հրապարակման անթույլատրելիությունը.

70. Հանրային պաշտպանության բնութագիրը: Անվճար իրավաբանական օգնության իրավունք ունեցող անձինք.

71.Հանրային պաշտպանի հասկացությունը: Հանրային պաշտպանի գրասենյակի կարգավիճակը: Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը: Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը.